ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Երասխահունի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

--իրականացնում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները

__աջակցում է համայնքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը

__աջակցում է համայնքում անասունների տոհմային, սերմնաբուծական և անասնաբուժական աշխատանքներին

__կազմակերպում է համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, մասնակցություն և օժանդակություն է ցուցաբերում դրանց շինարարության և վերանորոգման աշխատանքներին

__իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը

--իրականցնում է համայնքի ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումները

--ապահովում է համայնքի հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում են.

_առնվազն միջնակարգ կրթություն

-սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

Մրցույթը կկայանա 2016 թվականի հուլիսի 8-ին ժամը 14.00-ին Երասխահունի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ գ . Երասխահուն փողոց N1 շենք N 9):

Մրցույթին մասնակցելու համար դիմող անձինք Երասխահունի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1.Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):

2.Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի բնօրինակները պատճեների հետ միասին:

3.Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ 2005թվականի մարտի 3-ի N10-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

4.Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

5.Արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը:

6.Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքի փաստաթուղթ:

7.Անձնագրի պատճեն.

8.Սոցիալական քարտի պատճեն:

9.Ինքնակենսագրություն:

10.Մեկ լուսանկար 3Х4 չափսի

Փաստաթղթերի պատճեները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար դիմել Երասխահունի համայնքապետարանի աշխատակազմ (հեռախոս 093-01-01-09) կամ Արմավիրի Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան-71, հեռախոս 0237-2-76-49)

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը՝ 10.00-ից մինչև 16.00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի հունիսի 21-ը:

ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

2016 թվականի հունիսի 6

գ. Երասխահուն